

յիշեալ Օսման էֆէնտի միջոցաւ Հայերը նամակ մը ուղղ'եցին կառավարութեան, ուր կը կրկնէին այն հաւատարմութիւնը թէ իրենք երբէք գէշ դիտումներ ունեցած չեն: Արդ, այս գրութենէն անմիջապէս վերջ տրուած կառավարական միակ հրաման մը բաւական եղաւ յարձակումը դադրեցնելու: Դարձեալ այս պարագան յայտնի փաստ մըն է որ՝ կոստանդուպոլիսի պատրաստած եւ կազմակերպուած եհն տղայակազմի իշխանութեանց զիտակցութեամբ եւ հրահանով:

Ապրիլ 12էն սկսուած ջարդը, ինչպէս Ապրիլ 1ինը, վերագրուած էին ծիծաղելի կերպով յարմարուած արտասոց պատճառի մը, որպէսզի ատով պատասխանատուութիւնը ձգեն Հայերուն վրայ:

Ճէվատ պէյ, իր տեղեկադրին մէջ, կ'ուղէ հաւատալ եւ հաւատացնել որ Հայոց թաղէն զինուորական ջոկատներու վրայ կրակուած ըլլալով, վերջիններք յարձակած են այդ թաղին վրայ: Իսկ հրդեհումներու եւ աւարառութիւններու վրայէն լուծեամբ կ'անցնի:

Սակայն քննութիւնը ցոյց տուաւ որ՝ ո՛չ թէ միայն նիւթապէս անկարելի էր Հայոց թաղէն կրակել զինուորական բանակատեղիին վրայ, ալ նաեւ այն տունը, ուրկէ կը պնդուէր թէ հրացան պարպուած է, իսլամէ մը բնակուած էր: Խնդիրը կը կայանար ուրեմն կարգ մը իւլամներու խառնակչութեան վրայ, այդպէսով զինուորները Հայոց դէմ գրգռելու համար:

Յարգելի երեսփոխանները անշուշտ կը յիշեն որ Մարտ 31ի շարժման ժամանակ, յետադիմական մը — թերեւս Շէյխ Վահտէթի — երեսփոխանական ժողովէն հրացան պարպեց Այա-Սօֆիայի հրապարակը բանակած զինուորներու վրայ՝ որոնք փոխադարձեցին:

Այս միջոցը, — որուն նպատակն էր երեսփոխաններու կոտորածը լատաջացնել — ինչպէս կը տեսնուի: